

ղարքունիքի ասպատակութեան եւ կոտորածին: Ասոր վրայ Դաւոյ (Դաւիթ) եւ Շապուհ, որ կրնան Տէր Ներսէս Փիլիպեանի դերաստանէն ըլլալ, իրենց կարգին սպաննեցին Բարակի զինակից՝ Արլասադ Չուանչերիկ, որուն իկ մասնիկը փոքր, երիտասարդ ենթադրել կու տայ: Կերեւայ որ Արլասադ յաջորդ կամ ժառանգ չունեցաւ, որուն տեղ Արլասադի յաջորդեց «Յիսայի անուանեալն Արու Մուսէ՝ այր խաղաղութեան, քեռորդի Արլասադայ՝ ըմբռնեալ զգաւառն՝ իշխանացաւ ամենայնի» (Կաղանկատուացի, էջ 376):

Այս Իսա իպն Եուսուֆ իպն Իսթիֆանուն է որ Տարարի կը յիշէ, որն քով ուղեց զրկել իր Ապտ Ալլահ եղբայրը՝ Բարակ, երբ վերջինս բռնուեցաւ Սահլէ: Եսայի Արու Մուսէի Տարարիի առած անունը ցոյց կու տայ որ Եսայիի հայրը կը կոչուէր Եուսուֆ-Յովսէփ: Իպն ալ Ասիր Եուսուֆի տեղ ունի Եուսա (արդեօք Յովհաննէս):

Մեր պատմութեան մէջ կը յիշուի Յովհաննէս Եոանչահիկ մը (Բարխուտ. Պատմութիւն Աղուանից, Ա. էջ 136, որ զբժրախտարար ինծի պակեցաւ), որ մի գուցէ կարելի է նոյնացնել Արու Մուսէի հօր՝ Եունասի (Եուսուֆ) հետ: Կան որ Սահլ Սմբատեանի որդի կը կարծեն զինքը (Աճառեան, Յովհաննէս 80): Իսկ ուրիշներ ալ Եղբայր Սաիլի (Բարխուտ. անդ): Ասոր համար ապացոյց եւ վկայութիւն կը պակսի: Անանուն Արար ժամանակազրական հատակոտոր մը Իսթիֆանուսի (Արու Մուսէի⁶) քոջ որդին կը նկատէ Սահլը: Տարակոյս չկայ որ ազգականներ էին:

Բար Հերբայուս լուի Էսթեֆանա կը կոչէ զայն, շփոթելով Սահլի հետ: Նոյնը եւ Միքայէլ Ասորի:

Երբ Սահլ յանձնեց Բարակը ալ-Աֆշինի՝ Բարակի եղբայրը Եսայի Ստեփաննոսեանի բերդը կը գտնուէր: Ալ-Աֆշին զայն պահանջեց եւ Եսայի՝ Ապտ Ալլահը յանձնեց ալ-Աֆշինի:

Հաւանական է որ Արլասադի սպաննու-

թեան վերջ Արու Մուսէ հետու մնաց Բարակի հետ գործակցելէ, ինչպէս Սահլ, եւ ասիկա չեզոքութիւն մը ստեղծեց, որ ալ-Աֆշին յարգեց եւ Արու Մուսէի անպատեհութիւն մը չներկայացուց Ապտ Ալլահը ալ-Աֆշինի յանձնելէ:



Մահմետականացած թուրք մը՝ Բուղա (Յուլ), որ Տարարի Բուղա ալ-Կարիր (Երէց) կը կոչէ, որ ալ-Աֆշինի հետ Բարակի դէմ մղուած պատերազմներուն մասնակցեցաւ քանիցս անյաջողութեամբ, եւ հետզհետէ քանի մը իսլիֆաներու ծառայեց: Իր բուն անունը, որ անձանօք մնացած է մեր մատենադրութեան մէջ, էր Բուղա ալ-Կարիր Արու Մուսա ալ-Թուրքի: Մահման զատապարտուեցաւ 868ին: Այս Բուղան Հայաստան զրկուեցաւ Հայոց ապստամբութիւնը զսպելու համար 851ին: Բուղա՝ Տարօն, Վասպուրական, Դուին հետզհետէ նուաճեց եւ անցաւ Սիւնիք, հաւանաբար 853ին, եւ զբաղուեցաւ քաջ Ծանարաց հետ, որ տեղի չտուին իրեն:

Սակայն այս անյաջողութեանն՝ ան անցաւ Աղուանից նուաճման, որու մասին երկար եւ մանրամասն կը խօսի Թովմա Արծրունի. «Եւ եղև մօտ ի կատարումն հասանել ամին երկրորդի զալստեան նորա՝ (Բուղայի) - տրուած թուականը մօտաւորապէս 854 - եւ զնաց ի կողմանս Աղուանից. եւ տիրէր յայնժամ մեծի կողմանս Աղուանից Ապումուսէ ոմն, որում վերձանութեանն յայտնութիւն՝ երիցու որդի ցանաչէր» (էջ 289): Ինչո՞ւ երիցու որդի կը կոչուէր Ապումուսէ, որ Եսայի Ստեփաննոսեանն էր, յայտնի չէ: Կարելի է խորհիլ որ իր հայրը Եուսուֆ - Եանուս (Յովհաննէս Եոանչահի⁶ կ) գուցէ քահանայ եղած էր:

Արծրունի կը շարունակէ. «Իսկ իբրև լուա (Ապումուսէ), թէ ահա առնալ Բուխայ զգորս իւր գալ հասանել ի վերայ